Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2020 թվականի 28 հոկտեմբերի
N 10-ն հրամանի

Ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀՀ Կոտայքի մարզի Հրազդամ համայնքի
Հրազդան քաղաքում
Իրականացված բնապահպանական ծրագրի մասին

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) անվանումը՝
ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 9 մանկապարտեզի պատուհանների փոխարինում

Ա) ԾՐԱԳՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրավական հիմքերը (նշել համայնքի ավագանու որոշման և ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի ամսաթիվը և համարը)՝ **Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 27-ի թիվ 118 որոշում**:

1. Ծրագրի սկիզբը և ավարտը՝ _____:

2. Ծրագրի նախագծային արժեքը՝ 19299,600 հազ. դրամ, որից 14 903, 080 հազ. դրամ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին և 4396,520 հազ. դրամ՝ համայնքային բյուջեի միջոցների հաշվին և __-___ հազ. դրամ այլ միջոցների հաշվին:

3. Համայնքի առկա խնդիրները և նախնական վիճակի նկարագրությունը՝ (Ծրագրով անդրադարձ կատարված բնապահպանության և առողջապահության ոլորտներում)

Կազմակերպությունների կողմից արտադրության վնասակար արտանետումների ցուցանիշը նվազեցնելուց բացի, անհրաժեշտություն կա իրականացնել էներգաարդյունավետության բարձրացմանն ուղված միջոցառումներ՝ մասնավորապես համայնքային ենթակայության թիվ 9 մանկապարտեզի շենքի պատուհանների փոխարինում էներգախնայող պատուհաններով, որը *հնարավորություն կտա*

- հնարավորինս նվազեցնել էներգետիկ ծախսերը՝ ի հաշիվ արդյունավետ պատուհանների տեղադրման,
- խուսափել միջանցիկ բամիներից, որի արդյունքում կկանխվի հնարավոր ջերմային կորուստները,
- փոշու և միջատների մուտքի արգելքի,
- ներքին հարմարավետության բարձրացման:

4. Ծրագրի նպատակը և Ծրագրով հաստատված ուղղակի և վերջնական ակնկալվող արդյունքները՝ Հաշվի առնելով, որ վերոհիշյալ ծրագրի իրականացումը կնպաստի համայնքի բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը, էներգախնայողության ցուցանիշների բարելավմանը

5. Ծրագրի շահառուները՝ (նկարագրել շահառուների խումբը՝ ըստ տարիքային, մասնագիտական, կարիքավորության կամ այլ գործոնների և նախատեսվող թիվը) Ծրագրի շահառուները համայնքի բնակչությունն է, մանկապարտեզ հաճախող սաները, դաստիարակները, աշխատակիցները:

6. Ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումները և դրանց ընտրության հիմնավորումները՝ (նշել Ծրագրի, ինչպես նաև ծրագրում ընդգրկված միջոցառումների ընտրման հիմնական պատճառները)_

Ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել նախորդ տարիներին բնապահպանական վճարներից կատարված մասհանումների հաշվին քաղաքում իրականացված ծրագրերը, ինչպես նաև ներկա պայմաններում առավել հրատապ լուծում պահանջող խիստ մտահոգող հարցերը:

Հրազդան համայնքի «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ և «Հրազդանի ՋԷԿ» ԲԲԸ աշխատանքի արդյունքում մթնոլորտ արտանետվող նյութերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել մշակել բնապահպանական ծրագիր:

Իրականացվող ծրագրի գլխավոր նպատակն է հնարավորինս նվազեցնել շրջակա միջավայրի՝ մթնոլորտի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանումը, ինչպես նաև Համայնքի տարածքում գործող էներգաարդյունավետ շենքերի թվի ավելացումը, արդյունքում կբարելավվի ընտրված մանկապարտեզի շենքային պայմանները, արտաքին տեսքը, կնվազեն էներգետիկ ծախսերը:

Բ) ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. Ծրագրի իրականացման փաստացի արժեքը՝ 19299,600 հազ. դրամ, որից 14903,080 հազ. դրամ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին և առկայության դեպքում՝ 4396,520 հազ. դրամ համայնքային բյուջեի միջոցների հաշվին և ___-__ հազ. դրամ այլ միջոցների հաշվին:

2. Ծրագրի փաստացի շահառուները՝ (նշել փաստացի շահառուների խումբը և թիվը ամբողջ ծրագրի ընթացքում) Համայնքի բնակչությունը՝ *66675 մարդ*, մանկապարտեզ հաճախող 107 երեխա:

3. Ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումները՝ (նշել փաստացի իրականացված միջոցառումները՝ յուրաքանչյուրի մասով կատարված աշխատանքների, նկարագրությամբ) Նախատեսված է իրականացնել *Համայնքի թիվ 9 մանկապարտեզի շենքի պատուհանների փոխարինում նոր՝ արդյունավետ ու էներգախնայող պատուհաններով:*

4. Ծրագրի իրականացնողները և աջակցողները՝ (թվարկել Ծրագրի յուրաքանչյուր միջոցառման մասով իրականացման մասնակիցների (ՏԻՄ, մասնավոր ընկերություն, ոչ առևտրային կազմակերպություն, միջազգային գործընկեր կամ հասարակական կազմակերպություն) անվանումները _Ծրագիրն իրականացվում է Հրազդանի համայքնապետարան, «Հրազդանի թիվ 9 ՆՈՒՀ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Մանվելյան Շին» ՍՊԸ-ի կողմից:

5. Ծրագրի փաստացի վերջնական արդյունքների նկարագրությունը՝ Փոխարինվել են թիվ 9 մանկապարտեզի դռներն ու պատուհանները: Տեղադրվել են մետաղապլաստե դռներ ու պատուհաններ, պատուհաններին տեղադրվել են հակամիջատային ցանց, մետաղապլաստե պատուհանագոգեր, արտաքին պատուհանագոգեր:

6. Հաշվետվության հրապարակումը՝ (նշել կայքէջում տեղադրման ամսաթիվը, ԶԼՄ-ներում հրապարակման դեպքում՝ նաև տալ հղումները) _____:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդամ համայնքի

Հրազդան քաղաքում

իրականացված բնապահպանական ծրագրի վերաբերյալ՝

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Փոքր բուլվարային փողոցին հարակից հատվածների բարեկարգում

(Ներկայացվում է Excel ֆայլի տեսքով)

Հ/հ	Ծրագրում ընդգրկված միջոցառման տեսակը և անվանումը		Ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նկարագրությունը		Միջոցառման սկիզբը (ամսաթիվը)	Միջոցառման ավարտը (ամսաթիվը)	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)										այլ միջոցների հաշվին (առկայության դեպքում)		
							ընդհանուր արժեքը			որից՝ պետական բյուջեի (սուբվենցիայի) հաշվին				համայնքի բյուջեի հաշվին (առկայության դեպքում)					
	բնա-պահ-պանա-կան	առողջա-պահական					նախա-գծային	փո-փոխ-ված	փաս-տացի	նախա-գծային	փո-փոխ-ված	փաս-տացի	մնա-ցորդը	նախա-գծային	փո-փոխ-ված	փաս-տացի	նախա-գծային	փո-փոխ-ված	փաս-տացի
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	*Էներգախնայողություն*	Միջանցիկ քամիներից պաշտպանում					19299,600			14903,080		14903,080		4396,520		4396,520		0	0
2																			
3																			

Միջոցառման իրականացնողը		Ոչ ֆինանսական ցուցանիշներ*)՝										Անմիջական շահառուների՝			Նախա-գծային և փաստացի իրակա-նացված միջոցա-ռումների, դրանց արժեքի և ոչ ֆինան-սական ցուցա-նիշների միջև շեղումների հիմնական պատ-ճառների նկարա-գրություն	Հաշվե-տվության հրապա-րակման ամսա-թիվը
		ցուցանիշ 1.		ցուցանիշ 2.		ցուցանիշ 3.		ցուցանիշ 4.		ցուցանիշ 5.						
անվա-նում	կոնտա-կտային տվյալներ՝ հեռա-խոսա-համար, էլ. փոստայ-ին հասցե	ծրագիր	փաստ	ծրագիր	փաստ	ծրագիր	փաստ	ծրագիր	փաստ	ծրագիր	փաստ	նկարա-գրված խումբը	նախա-տեսվող թիվը	փաս-տացի թիվը		
20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36
«Մանվելյան Շին» ՍՊԸ		*ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 9 մանկապարտեզի պատուհանների փոխարինում*										Համայնքի բնակիչներ				